

տով անցնողը և կամ ջուր խմողը անպայման մի քար է ձը-  
գում աղբիւրի գլխին, հաւատացած լինելով, որ եթէ այդ  
չանէ՝ ինքը կամ ազգականներից մինը կը մեռնի:

## Ե. ԳԼՈՒԽ

### ԾԱՌԵՐԻ ՊԱԾՏԱՄՈՒՆՔ

Վարանդայում սաստիկ տարածուած է ծառերի մեծա-  
րանքը. համարեա՛ ըլոր գիւղերում կան մի կամ միքանի  
ծառեր, որ սուրբ են համարւում, որոնց առաջ մոմեր են  
վառում, աքաղաղ և կամ ոչխար մատաղում, նրանց տերե-  
ւներից գուշակութիւններ անում: Շատ մեծ մեղք է համար-  
ւում այդ սրբազան ծառերը և կամ նրանց ճիւղերը կտրտե-  
լը, մեղանչողը անմիջապէս պատժւում է: Այսպէս՝ պատ-  
մում են, թէ մի մարդ, սրանից 40 տարի առաջ կտրել է  
Սարիբէկի ծառից մի ճիւղ, որի պատճառով և՛ անմիջապէս  
հիւանդացել, մահիճ է ընկել: Նրա հիւանդութիւնը մինչև  
այժմս էլ տևում է. նա այժմ պառկած է մի ջախպի մէջ:  
Կինը միշտ հսկում է նրա վերայ և ջախպի կողքից կապած  
մի գդալով շուտ շուտ կերակուր ածում նրա բերանը: Այժմ  
ամէն տարի մի անգամ նրան ուխտ են տանում Սարիբէկ:

Այս ծառերի ճիւղերը ծածկուած են բազմաթիւ, գոյնը գ-  
գոյն շորերի կտորներով, որ ուխտաւորները կապում են, ի-  
րենց հիւանդութիւնն էլ դրանց հետ միասին այդտեղ թող-  
նելու լուսով:

Երբ ուզում են գուշակութիւններ անել, առաւելապէս  
աղջիկները ճլորթի (ճինճի) են ձգում այդ սրբազան ծառե-  
րի վրայ, ինչպէս, օրինակ, շատ լաճախ անում են Նոր-Շէն  
գիւղում Սաղունց կաղնու վրայ, և սկսում ճօճալ: Մի որոշ  
բան մաները գնելով, նրանք լարում են իրենց բոլոր ուժը  
և ճլորթիով բարձրանալով՝ աշխատում մի տերև կտրել և

իրենց հետ բերել (պաշար բերել): Եթէ յաջողում են, դա սպացոյց է, որ իրենց մտադրած բանը կատարուելու է, լաւ է և այլն, իսկ եթէ չեն յաջողում, նշանակում է թէ չպիտի կատարուի, լաւ չէ և այլն:

Այսպիսի ծառերից մի քանիսը պաշտում են որպէս ամենայն տեսակ հիւանդութիւնների բժշկող և ամենայն տեսակ խնդիրներ կատարող, իսկ միւսները որպէս մի որոշ հիւանդութեան բժշկող և կամ մի որոշ զօրութիւն ունեցող:

Առաջին տեսակի ծառերից նշանուելը են.

Ա. Սխտորաշէն գիւղի այգիների մօտ գտնուող ահագին չինարի ծառը, որի շրջապատը 25 մետր է: Սրա բունը բոլորովին գտտարկ է և տասնեակ մարդիկ պաշտպանում են դրա մէջ անձրևի և ուրիշ ժամանակ: Առաւելապէս Համբարձման օրը շրջակայ գիւղերից մեծ բազմութիւն է գալիս այստեղ, մոմեր վառում և կաթով ճաշ (կաթնապուր) եփում բաժանում իբրև մատաղ:

Բ. Վերին Թաղավարդ գիւղից արևմտահարաւ անտառապատ բլրի վրայ գտնուող «Պըրևածառ» (բարևածառ) ուխտատեղու ծառերը:

Գ. Սարբէէկէ երեք հաստաբուն թեղի ծառերը:

Դ. Հին Իրախտիկից հիւսիս մի բլրակի վրայ գտնուող «Կախան» ուխտատեղու ծառերը:

Ե. Գիւնէյ-ձարտար գիւղի «Կոհակ» կամ «Յակովիկ» ուխտատեղու ճապիկի ծառերը:

Զ. Հին Քեաթուկ գիւղի Գիգաւոր (զօրաւոր) ուխտատեղու երկու ահագին կաղնու ծառերը:

Է. Հարաւ գիւղի «Զրաւոր» (զօրաւոր) անունով հինուուրց կաղնին:

Ը. Նոյն գիւղի հարաւային կողմում մի վերստ հեռաւորութեամբ «Ջամալի խաչ» անունով թեղի, հացի, կաղնու ծառերը:

Թ. Ղաւախան գիւղի թեղի և ընկուղի ահագին ծառերը:

Ժ. Սղնախ գիւղի «Խնձորախաչ» կաղնին: Սրա մասին

պատմում են, թէ մի ժամանակ խնձորենի է եղել: Մի օր մի թուրք ճիպոտով խփել է, որ խնձորեները թափէ, իսկոյն և եթ կաղնու է փոխարկուել:

ՔԱ. Միրիշալու գիւղի տնճրի ծառը, որ մի բունի վրայ բուսած չորս ահագին ծառեր են: Պատմում են, թէ Սուսանենց տնից մինը կտրել է այս ճիւղերից մինը և անմիջապէս մեռել: Նրա տունն էլ կամաց կամաց քանդուել է և սերունդը ոչնչացել: Եւ այժմ գիւղի կանայք անիծելիս ասում են. «Սուսանենց օճախի օյինը դայ գլխուտ»:

ՔԲ. Աւարուր գիւղի արևմտահարաւային կողմում, բլրակի վրայ «Մաթիկ բարայ» կոչուած կաղնի և այլ ծառերը:

Այստեղ ամէն մի անցորդ դնում է իւր ձեռնափայտը մի խոռոչաւոր կաղնու մէջ, լուսալով փայտի հետ իւր ցաւն էլ այնտեղ թողնելու: Զոհ մատուցանողները գործ են ածում այդ փայտերը մտտաղներն եփելու:

ՔԳ. Նոյն գիւղում, մի ուրիշ բլրակի վրայ գտնուող «Ծառեխ» անունով ուխտատեղու կաղնու, բոխու և այլ ծառերը:

ՔԴ. Նոր-Շէնի Սաղունց կաղնին:

ՔԵ. Գիշի գիւղի «Ոսկի-խաչ» անուն ահագին կաղնին:

ՔԶ. Գիւնէլ-ձարտարի Մմանէքի մօտի թիքեունը ծառը: Ասում են, թէ քահանան կտրել է դրա մօտ եղած միւս ծառը, որի պատճառով և՛ հիւանդացել և երեք օրից լետոյ մեռել է:

ՔԷ. Սզնէք գիւղի «Կաղնի խաչը»: Սա մի ահագին կաղնի է, որի մօտ մի խաչ քար կայ:

ՔԸ. Նոյն գիւղի «Կանաչ խաչը»: Սա էլ մի քարակոյտ է, շրջապատուած ընկուզենի և ուռի ծառերով:

ԻԹ. Գունավարդ գիւղի «Մաչին հարթ» անուն սղնի ծառը և այլն:

Միմիայն մի որոշ հիւանդութեան բժշկող և կամ մի որոշ շնորհք տուող սուրբ ծառերից նշանաւոր են հետեւեալները.

Սարիբէկում կայ մի հարիւրամեայ թեղի ծառ, որի բրնի մէջ առիշեղ  $\frac{1}{2}$  մետր երկարութեան մի նեղ անցք է

ձգուում: Մկնատամ ունեցողները մոմեր վառելով ծառի առջև, մի ճիւղի վրայ շոր են փաթաթում, անցկացնում անցքի մէջ և ապա հանում և հիւթը քսում մկնատամին: Ասում են թէ անմիջապէս լաւանում է:

Գերթ գիւղի մօտ կան չորս ահագին կաղնենիներ, որոնց բնի հողից վերցնում քսում են երեսներին, որ մկնատամ անցնի: Սրա ուխտի օրը Աւագ Զորեքշարթի օրն է, երբ բազմաթիւ մոմեր են վառում և մատաղներ կտրում:

Սարգսաշէնի մօտ մի քրլուէրդի ծառ կայ, որ կոչւում է «Լխտըլահազի խաչ»: Հաղողները գալիս այս ծառի առաջ մոմեր են վառում և բլեռներ գամում ծառին, շորի կտորներ կապում, որ այլ ևս չհազան:

Գոնավարդ գիւղում կայ մի խաչքար, շրջապատուած կաղնի ծառերով: Այս տեղը կոչւում է «Գիօրդնուկախաչ» և այստեղ գալիս են ձեռների վրայ «գորդնուկ» ունեցողները բժշկութիւն հայցելու:

Խաչմաչ գիւղի հանդէպ մի բլրակի վրայ գտնւում է «Հարևայ եղցի» անունով մի փոքրիկ մատրան աւերակ, ուր կան վեց ընկուզի և թեղի ծառեր: Սա բժշկութիւն է տալիս յօգացաւի և մէջքացաւի: Սիւնոյն ժամանակ ամէն մի անցորդ նախ ուխտ է անում այստեղ և ապա անցնում: Մինը պատմում էր, թէ մի անգամ հարբած լինելով՝ անցել է այդ տեղի մօտով և չէ համբուրել, տուն հասնելուն պէս վիզը ծռուել է, և միայն երկրորդ օրը, երբ մի աքաղաղ է դահել այդ ուխտատեղուն, ուղղուել է:

Հացի գիւղում «Որդոտէն (հորթերի) խաչ» անունով մի ահագին կաղնի կայ, որ բժշկութիւն է տալիս ջերմ ու տենդ հիւանդութեան:

Փիրիճամալ գիւղի «Զրաւար» (զօրաւոր) անունով խոռոչաւոր ծառը և նախիջևանիկի «Քամու-խաչ» անուն բարձր ծառերը բեզմատիզմի բժշկող են:

Գիշի գիւղի մօտ էլ կայ Բրբըջամալ կոչուած ուխտատեղին, որ մի մատրան հիմնայատակ աւերակ է, պատած թքեռն և թեղի ծառերով: Շատ լաց լինող երեխաներին

տանում այդ ծառերի տակ պարկեցնում և մի քար դնում են փորին, ու մոմեր վառում ծառերի առաջ, որ երեխան այլ ևս շատ լաց չլինի:

Նոր-Շէնում մի պոչնի ծառ կայ, որի բնի մէջ մի ծակ է գոյացած: Նախապէս մոմեր վառելով, լղար երեխաներին անց են կացնում այդ ծակով, որ գերանան:

Եմեջջան գիւղում գտնւում է «Ջեարկեայ մարագ» անունով ուխտատեղին, որ մի շարք մսուրների տեղեր են և միքանի խաչ քարեր: Սրանց մօտ կան շատ ծառեր, որոնց ուխտ են գալիս խուլ մարդիկ, բժշկուածիւն հայցելու:

Նախջլւանիկում մի նահատակի գերեզման կայ, խաչքարերով և ծառերով շրջապատուած, ուր բերում են խելագարներին, բժշկուածիւն հայցելու:

Դոնավարզ գիւղի հանգէպ, մի բլրակի վրայ գտնւում է մի փոքրիկ կաղնի, որ կոչւում է «Մատաղախուտ»: Այստեղ, այս կաղնուն զոհեր են մատուցանում, մանաւանդ երբ մորեթ է գալիս: Սաւում են, թէ մորեթը գալիս այդ կաղնու վրայ հանգստանում է և երբ մատաղ են կտրում, ուտում և անմիջապէս հեռանում է: Մատաղախուտի մօտ կայ մի հին ամլոցի աւերակ, որ տեղացիները «Գռապաշտի դալա» են կոչում: Աւանգաբար ասում են, թէ այդտեղ բնակող կռապաշտներն էլ այդ մատաղախուտի զոհեր են մատուցանելիս եղել:

Մոշկայ վանքում կան հինաւուրց ծառեր, ուր բերում են թէ հիւանդ և թէ առողջ անասուններ, երեք անգամ պտտեցնում ծառերի և վանքի շուրջը և մահակը կոտրում, որպէս զի հիւանդ անասունները առողջանան, իսկ առողջները պահպանուին հիւանդանալուց:

Դոնավարզ գիւղի արևելեան կողմը կայ մի ճապկի ծառ, որ շատ բարձր է: Հիւանդ անասուններին բերում երեք անգամ պտտեցնում են այս ծառի շուրջը և մահակը կոտրում ծառի տակ, որով և՛ անասունի հիւանդութիւնը այդ կոտրուած մահակի հետ մնում է այդտեղ ու անասունը լաւանում:

Նոյն գիւղում կայ և՛ «Տըվըրախաջ» անուն ուխտատեղին, որ մի խաջ քար է, շրջապատուած բոխի ու տանձի ծառերով: Ամուլ կովերին տանում են այնտեղ, որ ծնի:

Սուրբ Համարուած ծառերը չորանալուց յետոյ էլ ժողովրդի Համար նուիրական են մնում: Ոչ ոք չի կտրտում, վառում և կամ ուրիշ տեղ տանում այդ փայտերը, այլ շարունակում են մոմեր վառել և աղօթել զբանց առաջ: Եւ երբ սկսում է փթիլ, փոշին ջրի մէջ են ածում և խմում և կամ քսում զորտնուկի (ձեռի հիւանդութիւն) վրայ, որ առողջանայ: Այսպիսի փոշին «խնօթուն» է կոչւում:

Այսպիսի ծառերից նշանաւոր են Սզնէք գիւղի կաղնին, Գիւնէյ-ձարտարի օճիխ մօտինը և այլն:

Միքանի ծառեր էլ, ինչպէս և՛ միքանի քարեր, պաշտուում են լոկ այն պատճառով, որ կայծակի հարուած են ստացել: Թողովուրդը հաւատում է, որ անձրև կամ կարկուտ գալիս քաջքերը պաշտպանւում են ծառերի կամ քարերի տակ, իսկ հրեշտակները իրենց ձեռքի գաւազանով—կայծակով—խփում են նրանց և հալածում այնտեղից, միայնգամայն սրբելով և՛ ծառը կամ քարը: Այսպիսի ծառերից յիշենք օրինակ Հարաւ գիւղի կենդրոնում, ձորակի մէջ գտնուող կաղնին: Խաջմաջ գիւղում Հարեան եղջու ընկուզենին և այլն:

Միքանի բոյսերի և ծաղիկների մասին էլ կան հետեւեալ աւանդութիւնները.

#### Բ Ա Մ Բ Ա Կ

Աստուած մարդուն կաւից շինելուց յետոյ, կաւոտ ձեռքերը իրար է քսել և կաւի մնացորդները երկիր թափել, որից բամբակ է բուսել:



## Խ Ա Ղ Ո Ղ

Խաղողը յառաջացել է Նոյ Նահապետի մատուցած զոհի սսկորներէց, գետնի մէջ թաղելուց լետոյ:

## ՎԱՐԳ ԵՒ ՄԱՆՈՒՇԱԿ

Վարդն ու մանուշակը քոյր և եղբայր են, որ միմեանց միշտ կարօտ են մնում: Եթէ մինը կարողանայ պահել մանուշակին և ցոյց տալ քրոջը՝ ինչ որ խնդրէ, անմիջապէս կը կատարուի:

## Զ. ԳԼՈՒԽ

## ԿԵՆԳԱՆԻՆԵՐԻ ՊԱԾՏԱՄՈՒՆԲ

Ա.

Թ Ռ Զ Ո Ւ Ն Ն Ե Ր

Ծ ի ծ Ե Ո Ն Վ Կ .

Վարանդայում թռչուններից ամենից աւելի ծիծեռնակըն է պաշտուում: Շատ մեծ մեղք է համարուում նրան սպանել և կամ նրա բունը քանդել: Ինչ գանգատուում էր մի մարդ, թէ ուզում է տունը քանդել, նորոգել, բայց չի համարձակուում, որովհետև տան հետ միասին պիտի քանդուի և՛ ծիծեռնակի բունը: Գանգատուողը պնդում էր, թէ իւր հարևանի տունը հրդեհ էր ընկել և բոլոր երեխաներին այրել, որովհետև տան երիտասարդներից մին անխոհեմութիւն էր ունեցել ծիծեռնակի բունը քանդելու:

Մի կին էլ գանգատուում էր, թէ ծիծեռնակը բունը